ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ

GROUP OF PUBLIC MONITORS IMPLEMENTING SUPERVISION OVER THE CRIMINAL-EXECUTIVE INSTITUTIONS AND BODIES OF THE MINISTRY OF JUSTICE OF THE REPUBLIC OF ARMENIA

№ 24-034
11.10.2024

Հայաստանի Հանրապետություն
Քաղաք Երևան

«Առավոտ օրաթերթ»
ՍՊ ընկերության լրագրող /Aravot.am/
Արմենակ ԴԱՎԹՅԱՆԻՆ

Հարգելի պարոն ԴԱՎԹՅԱՆ,

Ի պատասխան Ձեր 2024թ-ի սեպտեմբերի 16-ի հարցմանը՝ տրամադրում ենք տեղեկություն հետևյալի մասին.

Վերջին երեք տարիների ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը (Խումբ) ՄԻԱՎ դրական կարգավիճակ ունեցող անձանցից ստացել է ահազանգեր, և արձանագրվել են նրանց նկատմամբ խտրական վերաբերմունքի՝ պայմանավորված վերջիններիս կարգավիճակով, ինչպես նաև բժշկական գաղտնիքի խախտման դեպքեր:

Ընդ որում՝ խտրականությունը դրսևորվել է ոչ միայն ՔԿՀ-ի աշխատակիցների, ազատազրկված մյուս անձանց, այլ նաև բժիշկ-մասնագետների կողմից, որոնք, ելնելով իրենց մասնագիտական պահանջներից, բավարար գիտելիքներ պետք է ունենան ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հետ աշխատանքի վերաբերյալ, ինչպես նաև պարտավոր են պահել բժշկական գաղտնիքը:

Բժշկական մասի աշխատակիցների կողմից դրսևորվել է խտրական վերաբերմունք ՄԻԱՎ կամ ՁԻԱՀ ունեցող մարդկանց նկատմամբ և բժշկական գաղտնիքի բացահայտում, որի արդյունքում՝

- Վերջիններս պահվել են մեկուսացված, ինչպես նաև առանձնացվել են նրանց սննդի և այլ պարագաները:

Մասնավորապես՝ 2021թ.-ին հերթական պլանային այցի ժամանակ նկատվել է տարբերակված վերաբերմունք ՁԻԱՀ ունեցող անձի նկատմամբ: «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ տվյալ ՔԿՀ-ի բժիշկների որոշմամբ անձին մեկուսացրել են և շարունակաբար պահել բուժմասի ստացիոնար բուժման սենյակում: Բժիշկների կողմից Խմբին հայտնել են, որ անձը իր կարգավիճակի պատճառով չի կարող մյուսների հետ մնալ, շփման առարկաները նույնպես առանձնացվել են, և նա մինչև ազատազրկման ժամկետի ավարտը պետք է առանձին պահվի: Ընդ որում՝ անձի ՁԻԱՀ ունենալու կարգավիճակը չի նշվել՝ որպես ստացիոնարում պահման հիմք, նշվել են տարբեր այլ հիմքեր: Անձին՝ ըստ բժշկական փաստաթղթերի, տեղափոխել են խուց, այնուհետև բուժմաս, սակայն իրականում նա միշտ պահվել է բուժմասի ստացիոնարում: Պետք է նշել, որ ՔԿՀ-ում գտնվող մյուս ազատազրկված անձինք ևս տեղյակ են եղել տվյալ անձի կարգավիճակի մասին և խուսափել են նրա հետ շփվելուց: Անձի հետ զրույցի ընթացքում վերջինս Խմբին հայտնել է, թե

№ 24-034
11.10.2024

Հայաստանի Հանրապետություն
Քաղաք Երևան

մեկուսացված է իր ցանկությամբ, թեև կցանկանար պահվել այլ անձանց հետ, սակայն մեկուսացված լինելը իր համար ավելի հարմար է, այլ եղանակ չի տեսնում:

Մեկ ուրիշ դեպքում անձին տեղափոխել են այլ ՔԿՀ՝ պայմանավորված իր կարգավիճակով: Մասնավորապես՝ 2021թ.-ին «Նուբարաշեն» ՔԿՀ կատարած այցի ընթացքում Խումբն արձանագրել է, որ խցերը նախատեսված են եղել 8 հոգու համար, և այդ ծանրաբեռնվածության պայմաններում ՄԻԱՎ-դրական կարգավիճակ ունեցող անձի հետ ոչ ոք չի ցանկացել համատեղ մնալ, ուստի անձին բժշկական ցուցումով տեղափոխել են «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ:

2022-2023թթ.-ի այցերի ընթացքում արձանագրվել են ՄԻԱՎ դրական կարգավիճակ ունեցող անձանց առանձին պահելու այլ դեպքեր ևս:

Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ) չափանիշների համաձայն՝ բանտարկյալները չպետք է մեկուսացվեն բանտում պահվող այլ անձանցից, եթե դա խիստ անհրաժեշտ չէ բժշկական կամ այլ պատճառներով: Այս առումով, ԽԿԿ-ն հատկապես ընդգծել է, որ չի կարող լինել որևէ բժշկական հիմնավորում՝ բանտարկյալների մեկուսացման համար միայն այն պատճառով, թե նրանք ունեն ՄԻԱՎ դրական կարգավիճակ:

Արձանագրված խնդիրների լուծման ուղղությամբ Խումբը խնդիրները քննարկել է համապատասխան գերատեսչությունների հետ, իսկ անհրաժեշտության դեպքում նաև գրություններ են ուղարկվել:

Նախագահ՝ **Սերգեյ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

Կազմեց՝ Շուշան ԽՆԿՈՅԱՆ
+37498606393